# Սեքսիզմ. նկատիր, անվանիր, դադարեցրու:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Սույն փաստաթղթի ամբողջական/մասնակի
վերարտադրման կամ թարգմանության հետ
կապված բոլոր հարցումները խնդրում ենք
ուղղել Եվրոպայի խորհրդի Հաղորդակցության
տնօրինություն
(F-67075 Strasbourg Cedex
կամ publishing@coe.int). Սույն
փաստաթղթին ցանկացած այլ նամակագրություն
պետք է ուղղել Մարդու իրավունքների և օրենքի
գերակայության գլխավոր տնօրինություն:
Կազմի դիզայն և էջադրում. փաստաթղթերի և
հրապարակումների տպագրության բաժին (SPDP),
Եվրոպայի խորհուրդ

Նկարազարդում.
© Եվրոպայի խորհուրդ

Սույն հրապարակումը չի խմբագրվել SPDP-ի
խմբագրական բաժնի կողմից՝ տպագրական և
քերականական սխալները շտկելու համար

© Եվրոպայի խորհուրդ,
սեպտեմբեր 2020 Տպագրվել է
Եվրոպայի խորհրդում

## Եվրոպայի խորհրդի գործունեությունը գենդերային հավասարության ոլորտում

Գենդերային հավասարությունը Եվրոպայի խորհրդի քաղաքականության առաջնային նպատակներից է: Գործողությունների գերակա ոլորտները սահմանվում են 2018-2023թթ. Գենդերային հավասարության ռազմավարությամբ, աշխատանքի եղանակներն են՝ գենդերային հավասարության հանձնաժողովի շրջանակներում 46 անդամ երկրների ներկայացուցիչների հետ միջկառավարական համագործակցությունը, երկրի մակարդակով՝ բոլոր ոլորտներում գենդերային հիմնախնդիրը ներառող ծրագրերը: Գենդերային կարծրատիպերին անդրադառնալը և սեքսիզմի դեմ պայքարը 2013թ.-ից ի վեր Եվրոպայի խորհրդի առաջնահերթությունն է և այդ ուղղությամբ իրականացվել են տարաբնույթ աշխատանքներ, մասնավորապես՝ լրատվամիջոցների և կրթության բնագավառներում:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

## Եվրոպայի խորհրդի 2019 թվականի սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի հանձնարարականը

2019 թվականի մարտին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ընդունել է CM/Rec(2019)1 հանձնարարականը սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ:

Հանձնարարականում տրվում է սեքսիզմի առաջին միջազգայնորեն համաձայնեցված սահմանումը, որը ներառում է ցանկացած գործողություն, ժեստ, տեսողական ներկայացում, բանավոր կամ գրավոր խոսքեր, պրակտիկա կամ վարքագիծ հիմնված այն մտայնության վրա, որ մարդը կամ մարդկանց խումբը՝ իրենց սեռով պայմանավորված, ստորադաս են: Այն մատնանշում է, որ սեքսիստական վարքագիծը անհամաչափորեն է ազդում կանանց և աղջիկների վրա՝ հանգեցնելով խտրականության և կանխելով հասարակության մեջ նրանց լիարժեք առաջխաղացումը:

# ԴԻՍԵՄԻԶՄԻՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՇԽԱՐՀ

Հանձնարարակը նաև մատնանշում է սեքսիզմի և կանանց նկատմամբ բռնության միջև կապը, քանի որ այս «ամենօրյա» սեքսիզմի գործողությունները հանդիսանում են բռնության բաղկացուցիչ մասը՝ ստեղծելով ահաբեկման, վախի, խտրականության, բացառման և անապահովության մթնոլորտ, որը սահմանափակում է հնարավորությունները և ազատությունը՝ առաջին հերթին անդրադառնալով կանանց վրա:

Հանձնարարականը շեշտը դնում է այն բանի վրա, թե որն է սեքսիստական վարքագիծը և տարբեր շահագրգիռ կողմերի համար ներկայացնում է բացահայտելու և խնդրի հետ առնչվելու գործնական ուղիներ: Այն ներառում է սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցների համապարփակ ցանկ և նախատեսում է կոնկրետ գործողություններ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ լեզուն և հաղորդակցությունը, մեդիան, ինտերնետը և սոցիալական ցանցերը, գովազդը և հաղորդակցության այլ միջոցները, աշխատավայրը, պետական հատվածը, արդարադատության ոլորտը, կրթական հաստատությունները, մշակույթը և սպորտը, ինչպես նաև, մասնավոր ոլորտը:

Այդ նորարարական փաստաթուղթը, որն ընդունվել է արձագանքելով այս ոլորտում հասարակության աճող ակնկալիքներին, կոչ է անում կազմակերպության 46 անդամ երկրներին ակտիվացնել սեքսիզմի դեմ պայքարը կյանքի բոլոր ոլորտներում, քանի որ այն տարածված է ամենուր և բոլոր հասարակություններում, ընդունել օրենսդրություն, որը կդատապարտի սեքսիզմը և կքրեականացնի սեքսիստական ատելության խոսքը:

# ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- Հանձնարարականում նաև կոչ է արվում երկրներին ազգային մակարդակով մշտադիտարկել սեքսիզմի դեմ պայքարի քաղաքականության իրականացումը և պարբերական զեկույցներ ներկայացնել Եվրոպայի խորհրդին:
- Եվրոպայի խորհրդի՝ Սեքսիզմ. նկատի՛ր, անվանի՛ր, դադարեցրո՛ւ, առցանց արշավի նպատակն է՝ տարբեր լեզուներով հասանելի ռեսուրսների օգնությամբ այս խնդրի վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը և հաղթարարումը: Բրոշուրում բացատրվում է, թե ինչ է սեքսիզմը և գաղափարներ են ներկայացվում այն մասին, թե ինչպես հնարավոր դարձնել մտածելակերպի փոփոխությունը, որն անհրաժեշտ է, սեքսիզմից և դրա դրսևորումներից զերծ Եվրոպա ստեղծելու համարե (Հանձնարարական CM/Rec(2019)1 սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ):

# Սեքսիզմ. ի՞նչ է դա

Սեքսիզմ է համարվում ցանկացած արտահայտություն (գործողություն, բառ, պատկեր կամ ժեստ), որի հիմքում այն գաղափարն է, թե որոշ անձինք, առավել հաճախ՝ կանայք, ավելի ստորադաս են՝ իրենց սեռով պայմանավորված:

Պատմականորեն ի լրումն անհատական դրսևորումների, մեր մշակութային նորմերը, լինի դա լեզվի, արվեստի, պատմության և թ՛ե օրենսդրական մակարդակում և քաղաքական ինստիտուտներում, եղել և մնում են կանանց նկատմամբ տղամարդկանց գերակայության գաղափարներով և գործելակերպով տոգորված, այն է՝ սեքսիզմով:

Երբեմն սեքսիզմն արտահայտվում է անուղղակիորեն, օրինակ՝ կատակների միջոցով, որոնք, սակայն, զուտ կատակներ չեն: Դրանք իրականում ծաղր են, որը հաճախ ուղղված է կոնկրետ մարդու և բնավ ծիծաղելի չեն: Նման նվաստացուցիչ հումորը կարող է դառնալ գործիք՝ սոցիալական գերիշխանության և կարծրատիպային հարաբերությունների ձևավորման, ինչպես նաև, մարդկանց լռեցնելու համար: Խոսքի ազատությունը չի կարող ծառայել որպես մի խումբ մարդկանց վիրավորելու, նսեմացնելու կամ նվաստացնելու հիմք կամ պատրվակ:

ՍԵՔՍԻԶՄ. ԼԿՍՏԿՄ

ՍԵՔՍԻԶՄ. ՆԿՍՏԿՐ

# Սեքսիզմ. ո՞րոնք են դրա հետևանքները

- Սեքսիզմը վնասաբեր է: Այն կանանց և տղամարդկանց միջև անհավասարության հիմք է հանդիսանում և կարող է հանգեցնել խտրականության: Կանանց մեծամասնությունը ինչ-որ պահի ենթարկվել է սեքսիզմի որևէ դրսևորման: Առավոտյան անպարկեշտ արտահայտություններ՝ հասարակական տրանսպորտում, կեսօրին՝ աշխատավայրում կարևոր հանդիպման չմասնակցելու, կենցաղային և ծնողական պարտականությունների անհավասար բաշխման, երեկոյան ժամերին սեքսիստական արտահայտությունների տեսքով՝ հեռուստատեսային հաղորդումներում. սեքսիզմը մի բան է, որին շատ կանայք առերեսվում են ամբողջ օրվա ընթացքում:Այդ վերաբերմունքը ծանր բեռ է կնոջ համար կյանքի ողջ ընթացքում:
- Սեքսիզմն առաջացնում է անարժանության զգացում, հանգեցնում է ինքնագրաքննության, խուսափողական ռազմավարությունների որդեգրման, վարքագծի փոփոխության և առողջության վատթարացման:
- Սեքսիզմի դրսևորումները ստեղծում են վախի և անպաշտպանության մթնոլորտ, ինչը կարող է հանգեցնել բռնության հանդուրժողականության՝ հատկապես կանանց և աղջիկների նկատմամբ:

# Սեքսիզմ. ովքե՞ր են դրա ազդակիրները

- Սեքսիզմն անդրադառնում է բոլորի վրա, բայց կանայք և աղջիկները անհամաչափորձն են տուժում: Սեքսիզմի թիրախում են հատկապես հասարակական գործունեությամբ զբաղվող կանայք (քաղաքական գործիչներ, լրագրողներ, հանրաճանաչ դեմքեր), կանայք, որոնք աշխատում են միջավայրում, որտեղ գերակշռում են տղամանրդիկ, ինչպես նաև երիտասարդ կանայք:

- Որոշ անձանց համար սեքսիզմի բացասական ազդեցությունը կարող է ավելի լուրջ լինել՝ ազգային պատկանելության, տարիքի, հաշմանդամության, սոցիալական ծագման, կրոնի, գենդերային ինքնության կամ ինքնարտահայտման, սեռական կողմնորոշման, փախստականի կարգավիճակի կամ այլ գործոնների պատճառով:

- Սեքսիզմն ազդում է նաև տղամարդկանց և տղաների վրա, հատկապես, երբ նրանք չեն համապատասխանում տղամարդկանց ավանդական կարծրատիպերին: Դա կարող է լինել այն դեպքում, երբ տղամարդիկ միջոցներ են ներդնում իրենց երեխաների կյանքում, ունեն այնպիսի աշխատանք, որը հիմնականում կամ ավանդաբար կանանց մենաշնորհն է (մանկաբարձ, բուժքույր) կամ, երբ նրանք չեն հետաքրքրվում տղամարդուն վայել հարցերով կամ չեն ներգրավվում նման գործողություններում (մի շարք մարզաաձևեր, ձեռքի աշխատանք, հաճախակի փոխվող սեռական զուգընկերներ և այլն):

# Ո՞վ է սեքսիստ

- Ֆրանսիայում 2018 թվականին սեքսիզմից տուժողների 87%-ը կանայք էին, իսկ սեքսիզմի համար մեղավոր ճանաչվածների 91%-ը՝ տղամարդիկ: Ոչ բոլոր տղամարդիկ են սեքսիստ, ընդ որում, տղամարդիկ հսկայական ներդրում ունեն սեքսիզմի դեմ պայքարում: Միևնույն ժամանակ, որոշ կանայք իրենց հերթին տարածում և դրսևորում են սեքսիստական կարծրատիպեր կամ գործելակերպ: Շատ հաճախ, սեքսիզմը քննադատելը կարող է հանգեցնել ծաղրի կամ, ավելի վատ, ագրեսիայի, ուստի մենք չպետք է շտապենք քննադատել նրանց, ովքեր վախենում են դիմակայել դրան:

- Սեքսիզմի մեջ բնական ոչինչ չկա, և հետևաբար ոչ ոք, ո՛չ կանայք, ո՛չ տղամարդիկ, իրենց բնույթով սեքսիստ չեն: Մյուս կողմից, մենք բոլորս պետք է վերանայենք մեր ընկալումները:

# Սեքսիզմը լեզվի և հաղորդակցության մեջ

## Օրինակներ

Մեքենա գովազդելու համար կիսամերկ կնոջ կերպարի օգտագործելը, խառը խմբի մասին խոսելիս արական սեռի դերանուններ օգտագործելը, ընկերության տեսանյութերում միայն տղամարդկանց պատկերելը:

## Ինչո՞ւ պետք է անդրադառնալ այդ խնդրին

Սեքսիստական լեզուն և պատկերները արմատավորում են սեքսիստական վերաբերմունքը և վարքը: Որոշ մարդկանց կամ նրանց դերը ներկայացնելով կամ անտեսելով՝ տեքստը կամ պատկերները կարող են անտեսանելի դարձնել կանանց և նրանց ներդրումը հասարակկական կյանքում: Կարծրատիպերը կանանց և տղամարդկանց պարփակում են որոշակի բնավորության գծերի սահմաններում:

## Ինչպե՞ս կանխել այն

Խառը լսարանի հետ խոսելիս օգտագործել ներառական լեզու: Հրաժարվել սեքսիստական արտահայտություններից: Անել այնպես, որ հաղորդակցման գործիքները ներկայացնեն կանանց և տղամարդկանց հավասարակշռված և դիվերսիֆիկացված պատկերներ և/կամ մարտահրավեր նետել կարծրատիպերին: Պատրաստել գենդերազգայուն հաղորդակցության վերաբերյալ ձեռնարկներ: Աջակցել այս ոլորտում կատարվող հետազոտություններին և վերապատրաստումներին:

ՍԵՔՍԻԶՄ. ԱՆՎԱՆԻՐ

# Սեքսիզմը մեդիայում, ինտերնետում և սոցցանցերում

## Օրինակներ.

Հոդվածներ, որոնք ավելի շատ կենտրոնանում են կին քաղաքական գործիչների արտաքին տեսքի, այլ ոչ թե նրանց կողմից առաջարկվող գաղափարների վրա, հեռուստատեսային հաղորդում, որը ներկայացնում է կանանց միայն որպես ականատես կամ կարծրատիպային կամ սեքսուալացված դերերում և հազվադեպ՝ որպես փորձագետ, ինտերնետային հավելվածներ, որոնցով աշխատանքի որոշակի առաջարկներ ուղարկում են միայն տղամարդկանց, որովհետև ալգորիթմները կառուցված են կողմնակալ կերպով:

## Ինչո՞ւ պետք է դրան անդրադառնալ

Մեդիայում սեքսիստական հաղորդագրությունները ամրապնդում են կարծրատիպերը, սահմանափակում են կանանց և տղամարդկանց որոշակի դերերում և իրական վնաս պատճառում: Դրա հետևանքով որոշ մարդիկ, օրինակ՝ երիտասարդ կանայք, կին լրագրողները կամ ակտիվիստները կարող են ստիպված լինել հեռանալ սոցիալական ցանցերից՝ ծաղրից և վիրավորանքներից խուսափելու համար:

**Փաստ.** հարցված 3 կին լրագրողներից 2-ն ասել են, որ իրենց առնվազն մեկ անգամ սպառնացել կամ բռնության են ենթարկել առցանց: Դրանցից մոտ 40%-ն ասել է, որ խուսափում է որոշակի թեմաների մասին խոսելուց՝ վախենալով առցանց հետապնդումներից:

## Ինչպե՞ս կանխել այն

Իրավաբանորեն սահմանել ատելության սեքսիստական խոսքը (հատկապես առցանց) և քրեականացնել այն:Կազմակերպել թվային հմտությունների ուսուցում, այդ թվում՝ երիտասարդների և երեխաների համար: Ստեղծել առցանց սեքսիզմի դեմ պայքարի վերաբերյալ մասնագիտացված խորհրդատվական ծառայություններ: Պատրաստել մեդիա և հաղորդակցման մասնագետներ: Հաղորդել սեքսիստական նյութերի մասին մեդիան կարգավորող մարմիններին:

# Սեքսիզմն աշխատավայրում

Տղամարդու աշխատանքային առաջխաղացում, անտեսելով կնոջը՝ ենթադրելով, որ կինը չունի հեղինակություն կամ միշտ չէ, որ հասանելի է, երբ պահանջվում է,հանդիպման ժամանակ կանանց բացատրում են այն, ինչի մասին նրանք լավատեղյակ են, գործընկերոջը մանկական կամ չափազանց մտերմիկ անուններով կոչելը. վիրավորական մեկնաբանություններ անելով այն տղամարդկանց մասին, որոնք այնպիսի աշխատանք են ընտրում, որը նրանց հնարավորություն է տալիս ավելի շատ ներգրավվել ընտանեկան կյանքում:

**Ինչո՞ւ պետք է դրան անդրադառնալ**

Սեքսիզմը աշխատավայրում ստեղծում է վախի և ճնշող մթնոլորտ և խանգարում է անձի ներուժի լիարժեք դրսևորմանը: Սեքսիզմը, որպես կանոն, հանգեցնում է ցածր աշխատավարձերի և ավելի քիչ հնարավորություններ է ընձեռում նրանց համար, ովքեր գտնվում են դրա թիրախում:

**Ինչպե՞ս կանխել այն**

Վերանայել աշխատանքային օրենսդրությունը՝ներառելով սեքսիզմի դեմ պայքարը: Բացահայտել և շտկել գենդերային խտրականությունը աշխատավարձերի, պարգևավճարների կամ առաջխաղացման հարցերում: Նախատեսել սեքսիստական վարքագծի դեպքում բողոքարկման մեխանիզմներ, կարգապահական տույժեր և օժանդակ ծառայություններ:Ընդունել և կիրառել վարքագծի կանոնագիրք, որը տալիս է սեքսիստական վարքագծի սահմանում և տրամադրել ուսուցում՝ այն կանխելու համար: Բարձրացնել իրազեկվածությունը աշխատավայրում:

ՍԵՔՍԻԶՄ. ԱՆՎԱՆԻՐ

# Սեքսիզմը հանրային ոլորտում

**Օրինակներ.**

Աշխատանքի որոնման կենտրոններում կանանց կողմից որոշակի «արական» պաշտոններ զբաղեցնելը չի ողջունվում, հիվանդանոցում բժշկի հետ հանդիպման ընթացքում վերջինս հրաժարվում է բուժօգնություն տրամադրելուց՝ կասկածի տակ դնելով կնոջ ասածը կամ վիճարկելով նրա նշած ախտանիշները, հանրային ծառայության աշխատակիցների մեկնաբանություններ՝ օգտատերերի սեռական կողմնորոշման կամ արտաքին տեսքի վերաբերյալ, կամ հանրային տարածքում կանանց արտաքին տեսքի մասին մեկնաբանություններ:

**Փաստ.** կին պատգամավորների 68%-ը հայտնել է իրենց արտաքինի վերաբերյալ մեկնաբանությունների կամ գենդերային կարծրատիպերի վրա հիմնված դատողությունների մասին:

**Ինչո՞ւ պետք է դրան անդրադառնալ**

Հանրային հատվածի պարտավորությունն է օրինակ ծառայել: Սեքսիզմը խաթարում է հանրային ծառայությունների և հանրային տարածքի հավասար հասանելիությունը: Այն ստեղծում է ճնշող մթնոլորտ՝ թույլ չտալով հիմնականում կանանց աշխատել այդ ոլորտում կամ լիարժեք մասնակցել քաղաքական և հասարակական կյանքին:

**Ինչպե՞ս կանխել այն**

Մշակել սեքսիզմն արգելող օրենքներ, վարքագծի կանոններ, բողոքարկման մեխանիզմներ, կարգապահական միջոցներ և օժանդակ ծառայություններ: Վերապատրաստել անձնակազմը և բարձրացնել իրազեկվածությունը՝ հանրային վայրերում համապատասխան նյութերի կամ պաստառների օգտագործման միջոցով:

Պետական գնումների պայմանագրերում ներառել սեքսիզմի դեմ պայքարի մասին կետ: Խրախուսել բոլորի մասնակցությունը որոշումների կայացմանը: Նպաստել հետազոտություններին և տվյալների հավաքագրմանը:

# Սեքսիզմն արդարադատության ոլորտում



**Օրինակներ.**

Ոստիկանության ծառայող, որը հրաժարվում է գործել ընտանեկան բռնության վերաբերյալ բողոքի հիման վրա կամ կասկածի տակ է դնում բողոք ներկայացրած կնոջ խոսքը. դատավոր, որը տուժողին հարցնում է ոչ թե փաստերի, այլ նրա հագուստի կամ սեքսուալ տեսքի մասին, հիմնականում տղամարդկանցից մասնագիտական միավորման ղեկավար մարմին, կարծրատիպ, որ բռնաբարության ենթարկված հարբած երիտասարդ կինը «ինքն էր դա ցանկանում»:

**Փաստ.** Եվրոպայում միջինում ոստիկանների միայն 17,7%-ն են կանայք, թեև ոստիկանության բաժինները կանանց հետ պետք է գործ ունենան նույնքան, որքան՝ տղամարդկանց: Տուժողները հաճախ նախընտրում են խոսել կին ոստիկանի հետ՝ հատկապես կանանց նկատմամբ բռնության դեպքում:

**Ինչո՞ւ պետք է դրան անդրադառնալ**

Սեքսիստական նախապաշարմունքներն ու վարքագիծը կարող են ստիպել տուժողներին չհայտնել լուրջ միջադեպերի մասին՝ անվստահություն ստեղծելով արդարադատության համակարգի նկատմամբ: Նաև, օրինակ, իրավաբան կամ դատավոր կանանց նկատմամբ սեքսիզմը կարող է դրդել նրանց հեռանալ մասնագիտությունից:

**Ինչպե՞ս կանխել այն**

Հեշտացնել սեքսիստական վարքագծի մասին հաղորդում ներկայացնելը՝ ոստիկանություն: Իրականացնել աշխատանքում գենդերային հավասարության քաղաքականություն՝ արդարադատության ոլորտում: Պայքարել կարծրատիպերի դեմ՝ վերապատրաստումների և իրազեկման արշավների միջոցով, ինչպես նաև հանրայնացնել և կիրառել ներպետական և միջազգային չափանիշները, որոնք պաշտպանում են կանանց բռնությունից, թրաֆիքինգից և այլնից: Ապահովել, որ մասնագետներն իրենց դատողությունները հիմնեն փաստերի, իրավախախտի վարքի և գործի համատեքստի, այլ ոչ թե տուժողի վարքի և արտաքինի վրա:

ՍԵՔՍԻԶՄ. ԱՆՎԱՆԻՐ

# Սեքսիզմն արդարադատության ոլորտում

## Օրինակներ

Կրթական անձնակազմի կողմից աղջիկների և տղաների նկատմամբ (անգիտակցաբար) կողմնակալ կամ խտրական վերաբերմունք; կարծրատիպերի արմատավորում ուսուցման, դասագրքերի կամ կարիերայի ուղղորդման միջոցով; երիտասարդների արտաքին տեսքի կամ սեքսուալության մասին մեկնաբանությունները չպատժելը կամ նույնիսկ բուլիինգի ենթարկելը, այդ թվում՝ աշակերտների կամ ուսանողների շրջանում:

**Փաստ.** Միացյալ Թագավորությունում հարցմանը մասնակցած 16-ից-18 տարեկան աղջիկների 66%-ը եղել է դպրոցում սեքսիստական մեկնաբանությունների թիրախ կամ ականատես:

## Ինչո՞ւ պետք է դրան անդրադառնալ

Սեքսիզմի մթնոլորտը՝ լինի կրթական նյութում, կրթական անձնակազմի վարքագծի կամ երիտասարդների շրջանում, բացասաբար է անդրադառնում աշակերտների և ուսանողների աշխատանքի վրա և կարող է սահմանափակել նրանց կարիերայի և կյանքի ուղու ընտրության հնարավորությունը: Դպրոցները պետք է օրինակ ծառայեն սեքսիզմի դեմ պայքարում և հավասարության դասավանդման գործում:

## Ինչպե՞ս կանխել այն

Իրականացնել կրթության ոլորտում գենդերային հավասարության քաղաքականություն և օրենսդրական փոփոխություններ:Վերանայել դպրոցական ծրագրերն ու դասագրքերը՝ սեքսիզմը վերացնելու, կին արվեստագետների, գիտնականների և քաղաքականություն մշակողների ներգրավվածությունն ապահովելու համար, և որ կանայք և տղամարդիկ կարծրատիպային ձևով չներկայացվեն: Մատչելի դարձնել բողոքների մեխանիզմները: Ուսուցանել կանանց պատմությունը, գենդերային հավասարությունը և տրամադրել սեռական կրթություն (ներառյալ համաձայնությունը և անձնական սահմանները): Վերապատրաստել կրթական անձնակազմին, թե ինչպես պայքարել նախապաշարմունքների դեմ և նրանց տրամադրել դրա համար համապատասխան գործնական և նյութական միջոցներ:

# Սեքսիզմը մշակույթում և սպորտում

**Օրինակներ.**

Թերագնահատվում են այն մարզաձևերը, որոնցով հիմնականում կանայք են զբաղվում՝ նրանց ավելի քիչ ֆինանսավորում կամ մեդիա ժամանակ է տրամադրվում և ծաղրի են ենթարկվում այն տղամարդիկ, որոնք զբաղվում են այսպես կոչված «կանացի» սպորտով, ԶԼՄ-ներում՝ մարզուհիներին հարցեր են տալիս իրենց անձնական կյանքի մասին կամ նկարահանում են նրանց սեռական ակնարկվող դերերում, թանգարաններում կամ արվեստի գործերի համար շնորհվող գլխավոր մրցանակների մրցույթներում անտեսանելի են դարձնում կանանց ավանդը արվեստի պատմության մեջ, չեն խոսում արվեստում և սպորտում հետապնդումների և բուլիինգի մասին:

**Փաստ.** 2019 թվականի կանանց աշխարհի առաջնության մրցումների համար ազգային թիմերին տրվել է 30 միլիոն դոլար պարգևավճար: 2018 թվականին տղամարդկանց աշխարհի առաջնության մրցումների համար գումարը կազմել է 400 միլիոն դոլար՝ 13 անգամ ավելի:

**Ինչո՞ւ պետք է դրան անդրադառնալ**

Արվեստը, մշակույթը և սպորտը առանցքային դեր են խաղում գենդերային վերաբերմունքի և դերերի ձևավորման գործում: Հաճախ կանանց և տղամարդկանց մասին կարծրատիպային պատկերացումները խանգարում են մարդկանց ազատ կազմակերպել իրենց ժամանցը՝ արտահայտել իրենց ունակությունները և կարողությունները: Սեքսիզմը հանգեցնում է դրա ազդակիրների ավելի ցածր եկամուտների և ավելի քիչ հնարավորությունների:

**Ինչպե՞ս կանխել այն**

Իրականացնել մշակութային և սպորտային քաղաքականության գենդերային հավասարության ապահովման համար միջոցներ և ապահովել դրանց ֆինանսավորումը (որոշումների կայացում, դրամաշնորհներ, ցուցահանդեսներ, ուսուցում, դահլիճների/տարածքների տրամադրում): Ապահովել կանանց համար սպորտային կամ մշակութային միջոցառումների ավելի լավ լուսաբանում: Ընդունել սեքսիստական վարքագծի կանխարգելման կանոնագրքեր: Սահմանել կարգապահական միջոցներ: Քննադատաբար վերաբերվել այնպիսի պատկերների, որոնք արդարացնում կամ ծաղկեցնում են կանանց նկատմամբ բռնությունը:

ՍԵՔՍԻԶՄ. ԱՆՎԱՆԻՐ

# Սեքսիզմը մասնավոր կյանքում

**Օրինակներ.**

Այն, որ ընտանիքներում կանայք կրում են դաստիարակության և տնային աշխատանքի բեռի մեծ մասը, ստիպված են նախապես մտածել, պլանավորել և համակարգել այդ բոլոր խնդիրները, մանկական գրքեր կամ կոմիքսներ, որտեղ ներկայացված են աղջիկների և տղաների կարծրատիպային կերպարներ, աղջիկների և տղաների հագուստի և այլ պարագաների տարբեր գունային երանգներ:

Փաստ. Եվրոպայում կանայք շաբաթական միջինը 22 ժամ ծախսում են ընտանեկան և կենցաղային գործերի վրա, մինչդեռ տղամարդիկ՝ ընդամենը 9 ժամ:

**Ինչո՞ւ պետք է դրան անդրադառնալ**

Ընտանիքում չվարձատրվող աշխատանքն ազդում է աշխատաշուկայում կանանց մասնակցության, որոշումների կայացման, հանգստի և սոցիալական գործունեության վրա, ինչը ուղղակիորեն անդրադառնում է նրանց տնտեսական անկախության վրա: Աշխատանքի անհավասար բաշխումը և կանանց կամ, տղամարդկանց դերերի բաժանումը սկսվում է մանկությունից՝ կրթության միջոցով, ձևավորելով մարդկանց բնավորությունը և ազդելով ողջ կյանքի ընթացքում նրանց ընտրությունների վրա՝ լինի դա կրթության, թե մասնագիտական և անձնական կյանքում:

**Ինչպե՞ս կանխել այն**

աշխատանքի և կյանքի հնարավորությունները (օրինակ՝ մատչելի և որակյալ երեխայի խնամք, վճարովի երեխայի խնամքի համար արձակուրդ և՛ կանանց և՛ տղամարդկանց համար): Բարձրացնել իրազեկությունը և ուսումնասիրություն անցկացնել ընտանիքներում չվճարվող աշխատանքի ազդեցության և այն կիսվելու վերաբերյալ: Վերապատրաստել վաղ մանկության հաստատություն-ներում աշխատող անձնակազմը: Խրախուսել տղաների և աղջիկների կողմից տնային գործերում օգնությունը: Ապահովել, որ աղջիկներն ունենան խաղալու և հետազոտելու համար նույն տարածքն ու ազատությունը, ինչ՝ տղաները:

# Եվրոպայի խորհրդի հանձնարարականի իրականացում

Սեքսիզմի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի առաջարկներն առաջին հերթին ուղղված են կազմակերպության 46 անդամ երկրներին: Սակայն դրանք կարող են իրականացվել նաև ընկերությունների, միությունների, տեղական իշխանությունների, կրթական հաստատությունների և բոլոր տեսակի կազմակերպությունների կողմից: Ահա մի քանի առաջարկություն այն քայլերի վերաբերյալ, որոնք կարող են ձեռնարկվել.

Մշակել ներքին ընթացակարգեր՝ սեքսիստական գործողությունների մասին հաղորդելու, հանցագործներին պատժելու և տուժողներին աջակցելու համար:

Կազմել և կիրառել սեքսիզմի վերաբերյալ վարքագծի կանոններ կամ ուղեցույցներ՝ հարմարեցված կոնկրետ համատեքստին:

Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ և իրազեկման արշավներ և պատրաստել տեղեկատվական փաթեթներ անձնակազմի, ծառայություններ մատուցողների և գործընկերների համար:

Ապահովել, որ կազմակերպություններում շփման և հաղորդակցության լեզուն և ոճը լինի ներառական և ոչ սեքսիստական՝ առկա ռեսուրսների ներգրավմամբ:

Համագործակցել հասարակական կազմակերպությունների, այդ թվում՝ կանանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունների հետ՝ բացահայտելու և կիսելու լավ փորձը, ուսուցումը և սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործիքները:

ՍԵՔՍԻՀԱՅ.ՀԱՄԱՏԵՍՈՒԹ

## Աջակցություն հանրային իրազեկման քարոզարշավին

- Սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ հանձնարարականի ամբողջական տեքստը հասանելի է Եվրոպայի խորհրդի կայքում՝ https://www.coe.int/en/web/genderequality/combating-and-preventing-sexism
- Այցելեք քարոզարշավի էջը՝ https://www.coe.int/en/web/human-rights-channel/stop-sexism
- Աջակցություն հանրային իրազեկման քարոզարշավին և վիկտորինա սոցիալական ցանցերում:

## Սահմանումներ սեքսիզմն ավելի լավ ընկալելու համար

- Սեքսիզմ. «ցանկացած արարք, ժեստ, ցուցադրում, բանավոր կամ գրավոր խոսք, գործելակերպ կամ վարքագիծ, որի հիմքում այն գաղափարն է, որ անձը կամ անձանց խումբը ստորադաս է իր սեռի հիմքով, լինի դա հանրային կամ մասնավոր ոլորտում, առցանց, թե իրական կյանքում, հետևյալ նպատակով կամ հետևյալ նպատակի հանգեցնող՝
- անձի կամ մի խումբ անձանց հիմնարար իրավունքների և արժանապատվության ոտնահարելը.
- անձին կամ մի խումբ անձանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ սոցիալ-տնտեսական վնաս կամ տառապանք պատճառելը.

- վախեցնող, թշնամական, նվաստացնող, ստորացուցիչ կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը.

- անձի կամ մի խումբ անձանց կողմից մարդու իրավունքներին և դրանց լիարժեք իրականացմանը խոչընդոտելը.

- գենդերային կարծրատիպերը պահպանելը և խորացնելը»:

(Սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի CM/Rec(2019)1 հանձնարարական)

Գենդերային կարծրատիպերը «կանխորոշված սոցիալական և մշակութային դրսևորումներ կամ գաղափարներ են, որոնց համաձայն կանանց և տղամարդկանց տրվում են իրենց սեռով պայմանավորված և սահմանափակված հատկանիշներ և դերեր: Գենդերային կարծրատիպերը բխում են և միևնույն ժամանակ պատճառ են հանդիսանում խորապես արմատավորված վերաբերմունքների, արժեքների, նորմերի և նախապաշարմունքների: Գենդերային կարծրատիպերը լուրջ խոչընդոտ են իրական գենդերային հավասարության հասնելու ճանապարհին և հիմք են հանդիսանում գենդերային խտրականության համար: Նման կարծրատիպերը սահմանափակում են տղաների և աղջիկների, կանանց և տղամարդկանց բնական տաղանդների և կարողությունների զարգացումը, կրթական և մասնագիտական փորձառությունը, ինչպես նաև ընդհանուր առմամբ կյանքի հնարավորությունները»:

(Եվրոպայի խորհրդի 2018-2023 թթ. գենդերային հավասարության ռազմավարություն)

ՍԵՔՍԻԶՄ.ԸՆԴՀԱՆՈՒՐ

# Զգտելով ստեղծել սեքսիզմից և դրա դրսևորումներից զերծ Եվրոպա

*Եվրոպայի խորհրդի հանձնարարական CM/Rec(2019)1 սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ*

**www.coe.int/equality**
**gender.equality@coe.int**

PREMS073620

HYE

**www.coe.int**

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է: Այն ընդգրկում է Եվրամիության բոլոր 46 անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը միտված է մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրականացումը՝ անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE